

ՍԱՆՄԱՐԱՆԸ
ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆ Զ. - Սաղմունս 110-125



Թարգմանեց ու խմբագրեց՝
ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ≈ ¶ ð à ô Â ° ≈ Û Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպատակները մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³βi áó ì ³Ñ; Ô³½³ñ»³Υ

ê² ÔØàê² ð² ÛÀ
² ÛÒÛ² Î² Û °ô Ð² ê² ð² Î² ò
² ÔúÂøÆ Ð² Ø² ð

ԱՂԱՄՈՒ 110 [109]

Նստիր իմ աջ կողմում

- Կցորդ. Տ էր Յիսուսը Համբարյան երկինքի
է-նստեց Ասորի աջ կողմում (Հմմտ. Մրկ 16, 19):
- Կամ. Ահա, Կեսնում էմ երկինքի բացուած
է-մարդու Որդին, որ կանգնած է Ասորի աջ կողմում (Գրծ 7, 56):
- Կամ. Փնդուեցէ՛վ վերին իրականութիւնները,
որ Քրիստոս նստած է Ասորի աջ կողմում (Կղս 3, 1):
- Կամ. Յիսուս Քրիստոս Ասորի աջ կողմում է.
Հրեշտակներն ու զօրութիւնները ենթարկուած են Նորան (Հմմտ. 1 Պտ 3, 22):
- Կամ. Իր Կրօնի վրայ Գրուած է մի անուն.
Խաղա-որների Թագաւոր է- Կերերի Տ էր (Յյտ 19, 16):

¹ **Դատի: Ստղմու:**

Տէրն ասաց իմ Տիրոջը.
«Նստիր իմ աջ կողմում,
մինչեւ թշնամիներիդ կը դնեմ
պատուանդան ոտքերիդ ներքոյ»:

² Տէրը Սիրոնից առաքում է Քեզ
զօրութեանդ դաւազանը.
Իշխի՛ր թշնամիներիդ մէջ:

³ Քեզ հետ է զօրութեան օրերի սկիզբը.
ծոցից, սրբութեան մեծվայելչութեան մէջ,
ի սկզբանէ ծնեցի Քեզ, ո՛վ Որդի:

⁴ Տէրը սա երգուեց ընդմիշտ
եւ չի զղջալու.
«Դու քահանայ ես յաւիտեան,
Մեղքիսեղեկի նման»:

⁵ Իմ Տէրը կանգնած է Քո աջ կողմում,
Թագաւորներին ոչնչացնելու է.
Երբ հասնի Իր բարկութեան օրը,
⁶ դատելու է հեթանոսներին:

Ջախջախելու է երկրին տիրող գլուխը,
անցնելու է դիակներին միջով.

⁷ անցնելիս խմելու է աղբիւրից,
բարձր է պահելու Իր գլուխը:



Կցորդը. Աստուծ էին. ամէն բան լաւ արեց,
 խոլերին լսելէ որալիս, իսկ Համբերին՝ խօսել (Հմմտ. Մրկ 7, 37):

Կամ. Մեծ եւ սխանչելի են Քո Գործերը, Տէր, ամենակալ Աստուծ (Յյտ 15, 3):

Կամ. Փառաբանում եմ Քեզ, Հայր,
 որովհետեւ փոփրերին յայտնեցիր այս բաները (Հմմտ. Ղկս 10, 21):

¹ Ալէլուիա:

Երախտագիտութիւն եմ մատուցում Քեզ, Տէր, ամբողջ սրտով,
 ժողովի հաւաքուած հաւատացեալների մէջ.

² մեծ են Տիրոջ գործերը,
 խորհրդածուած նրանց կողմից՝ ովքեր սիրում են դրանք:

³ Գեղեցկութիւն է փայլում նրա գործերից,
 նրա արդարութիւնը մնում է յաւէտ.

⁴ Իր հրաշքների յիշատակը թողեց,
 կարեկցող եւ ողորմած է Տէրը:

⁵ Կերակուր է պարգեւում նրանց՝ ովքեր երկնչում են Իրենից,
 յաւիտեան յիշում է Իր ուխտը.

⁶ Իր ժողովուրդին յայտնում է Իր գործերի ուժը,
 տալու համար նրան հեթանոսների ժառանգութիւնը:

⁷ Իր ձեռքերի գործերը արդարութիւն եւ ճշմարտութիւն են,
 հաւատարիմ են Իր բոլոր հրամանները.

⁸ Հաստատուած են յաւիտեանս յաւիտենից,
 իրականացուած են ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ:

⁹ Նա առաքում է փրկութիւնն Իր ժողովուրդին,
 Իր ուխտը վաւերացուած է ընդմիշտ.
 սուրբ եւ ահեղ է նրա Անունը:

¹⁰ Տիրոջ երկիւղը սկիզբն է իմաստութեան,
 իմաստուն է նա՝ ով նրան հաւատարիմ է.
 Տիրոջ գովքը տեւելու է յաւէտ:



Կցորդը. Թող յետ լոյսը փայլի մարդկանց առաջ,
 որպէսզի փառաւորեն յետ Հօրը, որ երկնիցում է (Հմմտ. Մտթ 5, 16):

Կամ. Յիսուս անցաւ բարիէ Գործելով եւ բժշկելով,
 որովհետեւ Աստուծ Իր Հետք էր (Հմմտ. Գրծ 10, 38):

Կամ. Ընթացել է որպէս լոյսի որդիներ. լոյսի պարօղներն են բարութիւնը,
 արդարութիւնը եւ ճշմարտութիւնը (Հմմտ. Եփս 5, 8-9):

¹ Ալէլուիա:

Երանելի է այն մարդը, որ երկնչում է Տիրոջից,
եւ մեծ ուրախութիւն է գտնում Նրա պատուիրաններում.

² Երկրի վրայ զօրաւոր կը լինի իր սերունդը,
արդարների սերունդը օրհնեալ կը լինի:

³ Առատութիւն եւ լիութիւն կը լինի իր տանը,
իր արդարութիւնը կը մնայ յաւէտ.

⁴ փայլում է խաւարի մէջ, լոյս է արդարների համար,
կարեկից, ողորմած եւ արդար մարդը:

⁵ Նա բարի է, ողորմում է եւ իր բարիքներից տալիս,
իր ունեցուածքները տնօրինում է արդարութեամբ.

⁶ նա յաւիտեան չի սասանուի,
արդարը միշտ կը յիշուի:

⁷ Անյաջողութեան լուրերից չի դողում,
հաստատուն սրտով յենում է Տիրոջ վրայ.

⁸ իր սիրտը վստահ է եւ չի վախենում,
մինչեւ կը յաղթի թշնամիներին:

⁹ Առատութիւնը կիսում է աղքատների հետ,
յաւէտ մնում է իր արդարութիւնը,
իր ճակատը բարձրանում է փառքի մէջ:

¹⁰ Իսկ ամբարիշտը նրան տեսնում է ու բարկանում,
կրճտում է ատամները եւ զայրոյթից սպառնում.
բայց ամբարիշտների ցանկութիւնը ճակողում է:



[այս սաղմոսով սկսում է Հալէլը. Մղմ 113-118]

ԱՊՂԱՌԱ 113 [112]

Թող օրհնեալ լինի Տիրոջ Անունը

Կցորդ. Աւերջինները լինելու են առաջին, իսկ առաջինները՝ վերջին (հմմտ. Մտթ 20, 16):

կամ. Ասորո-աթ Գաւրնիկեց արեց Ըզօրներին
եւ Բարչրացրեց խոնարհներին (հմմտ. Ղկս 1, 52):

կամ. Ուրախացիր, ամուլ՝ որ չես թնամ,
որ ու՛ճեցես շարերն են լինելու լէո-աթի որդիները (հմմտ. Գղտ 4, 27):

կամ. Ասորո-աթ ընդրեց այն՝ ինչը որ արհամարհո-աթ է աշխարհում,
որպէսպի եղածներին ոչնչութեան հասարեցնի (հմմտ. 1 Կր 1, 28):

¹ Ալէլուիա:

Գովեցէք, Տիրոջ ծառաներ,
գովեցէք Տիրոջ Անունը.

² Թող օրհնեալ լինի Տիրոջ Անունը
այսուհետեւ եւ յաւիտեանս յաւիտենից.

³ արեւածագից մինչեւ արեւամուտ
Թող գովաբանուի Տիրոջ Անունը:

⁴ Բոլոր ժողովուրդների վրայ բարձրանում է Տէրը,
Իր փառքը՝ երկնքից վեր:

⁵ ո՞վ է նման Տիրոջը, մեր Աստծուն,
Նա բազմում է վերեւում, գահի վրայ:

⁶ Բայց այնտեղից խոնարհեցնում է հայեացքը,
տեսնելու համար երկնքում եւ երկրի վրայ:

⁷ Փոշու միջից բարձրացնում է տկարին,
աղքատին՝ աղբերի միջից:

⁸ Նրան առաջինների մէջ նստեցնելու համար,
Իր ժողովուրդի առաջինների շարքում:

⁹ ամուլին բազմեցնում է իր տանը,
որպէս իր որդիներով ուրախացած մայր:

Ալէլուիա:



ԱՄՂԱՌԱ 114 [113, 1-8]

Յնձա, երկիր, Տիրոջ առաջ

Կցորդ. **Մ**եր Հայրերը խմում են նաեւ մի ժայռից,

եւ այդ ժայռը՝ Բրիստոս Ինժնէր (հմմտ. 1 Կր 10, 4):

Կամ. Գո՞ւ՞՞՞, որ մի ժամանակ ոչ-ժողովուրդ էի՛ն,

այժմ, մինչդեռ, Աստուծոյ ժողովուրդն եմ (1 Պտ 2, 10):

Կամ. **Մ**եր Հայրենիքը երկնքում է.

այնտեղից եմ՛ն որպէս իր կից ապաստում Յիսուս Բրիստոսին (հմմտ. Փլպ 3, 20):

Կամ. Այստեղ ներշնչեալ եմ՝ մայրուհի վաղա՛յն նաեւ,

այլ ժողովուրդում եմ՛ն ապագայ վաղա՛յն (Եբր 13, 14):

¹ Երբ Իսրայէլը դուրս էր գալիս Եգիպտոսից,
Յակոբը՝ օտար ժողովուրդից:

² Յուդան դարձաւ Նրա Սրբութեան բնակավայրը,
Իսրայէլը՝ Նրա իշխանութիւնը:

³ Սա տեսնելով, ծովը քաշուեց,
Յորդանանը ետ ետ դարձաւ:

⁴ Լեռները ցատկոտեցին խոյերի նման,
բլուրները՝ հօտի գառնուկների պէս:

⁵ Ի՞նչ պատահեց քեզ, ծով, որ փախչում ես,
Յորդանան, որ ետ ես դառնում:

⁶ Լեռներ, որ ցատկոտում էք խոյերի նման,
բլուրներ, հօտի գառնուկների պէս:

⁷ Յնձա, երկիր, Տիրոջ առաջ,
Յակոբի Աստծոյ երեսի դիմաց:

⁸Նրա՝ ով ժայռը ահուկնքի է փոխում,
քարը՝ ջրի աղբիւրի:



ԱՊՂԱՌԱ 115 [113, 9-26]

Քո Անուանը տուր փառքը

- Կցորդ. Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած է եւ յաւիտենական կեանքի:
Փոփոխի որպէս կենցաղ, կոտորելից ճեռոտ մնացել է (Հմմտ. 1Յվհ 5, 20-21):
- Կամ. Գոտի կոտորելից պարզի էլ եկել Աստուան,
կենդանի է ճշմարիտ Աստուան շառայելու ճամար (1Թս 1, 9):
- Կամ. Ի՞նչ ճաղորդակցութիւն կայ Աստուայ ցածարի եւ կոտորելի միջեւ:
Մենք ենք կենդանի Աստուայ ցածարը (2Կր 6, 16):
- Կամ. Գովաբանեցել մեր Աստուան, պոփ՝ Սրա քոտոր շառաներ,
պոփ՝ որ երկնչո՞ւմ էլ Սրանից, փոփրեր եւ մեծեր (Յյա 19, 5):

¹Ոչ թէ մեզ, Տէր, ոչ թէ մեզ,
այլ Քո Անուանը տուր փառքը,
Քո շնորհի եւ Քո ճշմարտութեան համար:

²Ինչո՞ւ պիտի թողնես հեթանոսներին
ասել. «Ո՞ւր է նրանց Աստուածը».

³մեր Աստուածը երկնային բարձունքում է,
այն ամէնը, որ ուղում է, անում է:

⁴Նրանց կոռքերը ոսկի են ու դրամ,
մարդու ձեռքերով են ստեղծուած.

⁵բերան ունեն, բայց չեն կարող խօսել,
աչքեր ունեն, բայց չեն կարող տեսնել.

⁶ականջներ ունեն, բայց չեն կարող լսել,
քիթ ունեն, բայց չեն կարող հոտոտել:

⁷Նրանց ձեռքերը չեն կարող շօշափել,
նրանց ոտքերը չեն կարող քայլել,
նրանց կողորդները չեն կարող աղաղակել:

⁸Ով ստեղծել է դրանք, թող դրանց պէս դառնայ,
բոլոր նրանք՝ ովքեր դրանց հաւատում են:

⁹Բայց դու, Իսրայէլ, հաւատա Տիրոջը,
Նա է քո օգնութիւնն ու քո վահանը.

¹⁰տոհմ Ահարոնի, հաւատա Տիրոջը,
Նա է քո օգնութիւնն ու քո վահանը.

¹¹դուք, հաւատացեալներ, հաւատացէք Տիրոջը,
Նա է ձեր օգնութիւնն ու ձեր վահանը:

¹²Տէրը յիշում է մեզ եւ օրհնում,
օրհնում է Իսրայէլի տոհմը,
օրհնում է Ահարոնի տոհմը,

¹³ օրհնում է Տիրոջ հաւատացեալներին,
փոքրերին մեծերի հետ միասին:

¹⁴ Թող Տէրն առաւելագոյնս առատանայ ձեր համար,
ձեր եւ ձեր բոլոր որդիների համար.

¹⁵ օրհնեալ եղէք դուք Տիրոջից,
Նա է ստեղծել երկինքն ու երկիրը:

¹⁶ Երկինքը Տիրոջ երկինքն է,
երկիրը տուել է մարդկանց.

¹⁷ ննջեցեալները չէ՛ որ գովում են Տիրոջը,
ո՛չ էլ նրանք՝ որ իջնում են լռութեան մէջ.

¹⁸ բայց մենք օրհնում ենք Տիրոջը,
այժմ եւ յաւիտեանս յաւիտենից:

Ալէլուիա:



ՍԱՂԱՌՈՒ 116 [114-115]

Ես սիրում եմ եւ հաւատում

116ա

Կեանքս իսկ մահից

Կցորդ. Մի՛ վախեցէ՛ նրանցից՝ ովքեր սպանում են մարմինը .

բայց շէն կարող սպանել հոգին (Մտթ 10, 28):

Կամ. Երանելի են ննջեցեալները, որ մահանում են Տիրոջ հաւատով.

Հանգստանալու են իրենց յոգնութիւններից (Հմմտ. Յյտ 14, 13):

Կամ. Մինչեւ մահ հաւատարիմ եղիր եւ ինչպէս քամի կեանքի պսակը (Յյտ 2, 10):

Կամ. Միշտ պարբարեց եղէ՛կ պարասխանելու նրանց՝

«ովքեր հարցնում են Յիսուսի մասին» (Հմմտ. 1 Պտ 3, 15):

¹ Այո՛, ես սիրում եմ Տիրոջը,

Նա լսում է իմ աղաչանքների ձայնը.

² դէպի ինձ խոնարհեցնում է Իր ահանջը,

այն օրը, երբ կանչում էի Իրեն:

³ Մահուան պարանները սեղմում էին ինձ,

բռնուել էի դժոխքների ցանցում,

տրամուլթիւնն ու յուսահատութիւնը նեղում էին ինձ.

⁴ կանչեցի Տիրոջ Անունը,

«Խնդրում եմ Քեզ, Տէր, ազատիր ինձ»:

⁵ Տէրն արդար է եւ կարեկից,

մեր Աստուածը ողորմած է.

⁶ Տէրը փոքրերի պահպանն է,

խեղճ էի եւ տուեց ինձ փրկութիւնը:

⁷ Հոգի իմ, վերագտիր քո խաղաղութիւնը,

որովհետեւ Տէրը սիրում է քեզ.

⁸ կեանքս խլեց մահից,
աչքս՝ արցունքից, ոտքս՝ անկումից:

⁹ Ընթանալու եմ Տիրոջ ներկայութեանը,
կեանքն ունեցողների երկրում:



116բ

Կը բարձրացնեմ փրկութեան գաւաթը

Կցորդ. Յիսուս վերցրեց Գաւաթը, ասելով.

Այս Գաւաթը նոր ուրիշն է, կն՛վեա՞ծ՝ իմ արիւնով (Հմմտ. Ղկտ 22, 20):

Կամ. Օրհնութեան Գաւաթը, որ մենք օրհնում ենք,

Հաղորդութիւն է Քրիստոսի արեանը (Հմմտ. 1Կր 10, 16):

Կամ. Խորանի ներկէ-ում գետայ Ըոգիները նրանց՝

ովքեր սպանուել են Ասրժոյ խօսքի Համար (Յյտ 6, 9):

¹⁰ Հաւատացի նաեւ երբ ասում էի.

«Մի խեղճ դժբախտ եմ ես».

¹¹ երբ մտամոլորութեանս մէջ ասում էի.

«Մարդը պատրանք է»:

¹² Ինչպէ՞ս կարող եմ շնորհակալ լինել Տիրոջը
այն ամբողջ բարիքի համար, որ արեց ինձ.

¹³ կը բարձրացնեմ փրկութեան գաւաթը,
կը կանչեմ Տիրոջ Անունը.

¹⁴ Տիրոջը տուած ուխտերս կը կատարեմ
Իր ամբողջ ժողովրդի դիմաց:

¹⁵ Տիրոջ առաջ թանկարժէք է
Իր մտերիմների մահը.

¹⁶ այո՛, Քո ծառան եմ ես, Տէր,
Քո ծառան, Քո աղախնու որդին,
եւ Դու փշրեցիր իմ շղթաները:

¹⁷ Երախտագիտութեան զոհ եմ մատուցելու Քեզ,
կանչելու եմ Տիրոջ Անունը.

¹⁸ Տիրոջը տուած ուխտերս կը կատարեմ
Իր ամբողջ ժողովրդի դիմաց,

¹⁹ օթեւանում, Տիրոջ ներկայութեանը,
քո մէջ, Երուսաղէմ:

Ալէլուիա:



ԱՊՐԱՆՈՒ 117 [116]

Մեր վրայ գերառաա հեղուս Է Իր սերը

Կցորդ. Հեթանոսները լիառատորոմ են Ասորթուն Իր ողորմութեան Համար (Հմմտ. Հռմ 15, 9):
Կամ. Հեթանոսները Աւերարանի միջոցով կանչուած են
մասնակցելու խոսքմանը Յիսուս Քրիստոս (Հմմտ. Եփս 3, 6):

¹ Գովեցէք Տիրոջը, բոլոր ազգեր,
բոլոր ժողովուրդներ, երգեցէք Նրա գովքը:

² Մեր վրայ գերառաա հեղուս է Իր սէրը,
Տիրոջ հաւատարմութիւնը յաւիտենական է:

Ալէլուիա:



ԱՊՐԱՆՈՒ 118 [117]

Տիրոջ պատրաստած օրը

Կցորդ. Առաջեալներն ու մարգարէներն իմանալով իրայ կառուցուած,
ունելով Քրիստոս Յիսուս որպէս անկեանաւար (Հմմտ. Եփս 2, 20):

Կամ. Ես Սիոնի մեջ Գայթակոթեան վար եմ գնում:

Ով կը Հաւատայ Նրան, ամբողջ շնորհայ (Հմմտ. Հռմ 9, 33):

Կամ. Ովսաննա Գաթի Որդուն: Օրհնեալ է Աստուծոյ
որ Գալիլէա է Տիրոջ Անունով (Մտթ 21, 9):

Կամ. Ասորուս յարութիւնն արեւոյ Յիսուսին,
ազատելով Նրան մահուան արայ անվերջից (Հմմտ. Գրծ 2, 24):

Կամ. Ով շարասի է, իմ մօտ ըող Գայ ու խմի: Ով Հաւատում է ինձ,
կենդանի ջրի վրակներ են Հոսելու նրա որովայնից (Հմմտ. Յվհ 7, 37-38):

Կամ. Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք: Ով Հաւատում է ինձ,
նոյնիսկ ելել մեռնի, կ'ապրի յաւիտեան (Հմմտ. Յվհ 11, 25):

¹ Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը. Նա բարի է,
Նրա սէրը յաւիտենական է:

² Իսրայէլն, ուրեմն, թող հռչակի.
«Նրա սէրը յաւիտենական է»:

³ Ահարոնի սերունդը թող հռչակի.
«Նրա սէրը յաւիտենական է»:

⁴ Տիրոջ հաւատացեալները թող հռչակեն.
«Նրա սէրը յաւիտենական է»:

⁵ Նեղութեանս մէջ աղաղակեցի Տիրոջը,
Տէրը լսեց ինձ.

⁶ Տէրն ինձ հետ է, չեմ վախենում,
ի՞նչ կարող է անել ինձ մարդը.

⁷ Տէրն ինձ հետ է ինձ օգնելու համար,
Թշնամիներիս կը դիմագրաւեմ:

⁸ Աւելի լաւ է ապաւինել Տիրոջը՝
քան վստահել մարդուն.

⁹ աւելի լաւ է ապաւինել Տիրոջը՝
քան վստահել հօգօրներին:



¹⁰ Կռապաշտները շրջապատեցին ինձ,
Տիրոջ Անունով ոչնչացրեցի նրանց.

¹¹ Հորս կողմից մօտեցան ու շրջապատեցին ինձ,
Տիրոջ Անունով ոչնչացրեցի նրանց:

¹² Չորս կողմս բռնեցին իշամեղուների նման,
Տիրոջ Անունով ոչնչացրեցի նրանց.
այրուեցին՝ կրակ նետուած չոր ցախի նման:

¹³ Ուժով հրեցին ինձ, որպէսզի ընկնեմ,
բայց Տէրն օգնեց ինձ.

¹⁴ Իմ ուժն ու իմ երգը Տէրն է,
Նա է իմ փրկութիւնը:

¹⁵ Ուրախութեան եւ փրկութեան աղաղակներ են բարձրանում
արդարների վրաններից.

«Տիրոջ աջը հրաշքներ է գործում,

¹⁶ Տիրոջ աջը բարձրացնում է,
Տիրոջ աջը հրաշքներ է գործում»:

¹⁷ Խուսափեցի մահից եւ ապրելու եմ,
աւետարանելու համար Տիրոջ գործերը.

¹⁸ Հարուածեց ինձ, Տէրը հարուածեց ինձ,
բայց չյանձնեց ինձ մահուան ձեռքը:



¹⁹ Բացէք իմ առջեւ արդարութեան դռները,
գալիս եմ Տիրոջը շնորհակալ լինելու.

²⁰ «Սա է Տիրոջ դուռը,
նրանից ներս են մտնելու արդարները».

²¹ Երախտագիտութիւն եմ մատուցում Քեզ, որովհետեւ լեցիր ինձ,
Դու ես իմ փրկութիւնը:

²² Շինարարների կողմից մերժուած քարը
անկեան գլխաւոր քարը դարձաւ.

²³ սա Տիրոջ կողմից կատարուեց
եւ հիանալի է մեր աչքերի առաջ.

²⁴ սա Տիրոջ պատրաստած օրն է,
նրանում ցնծանք եւ ուրախ լինենք:

²⁵ Տէր, խնդրում ենք Քեզ, փրկիր մեզ,
Տէր, խնդրում ենք Քեզ, յաղթանակիր.

²⁶ օրհնեալ է նա՛ ով գալիս է
Տիրոջ Անունով:

«Օրհնում ենք ձեզ Տիրոջ բնակավայրից:

²⁷ Աստուած, Տէրը, թող լուսաւորի մեզ»:
«Ձեր ձեռքերին ճիւղեր, թափօր կազմեցէք,
մինչեւ խորանի անկիւնները»:

²⁸ Դու իմ Աստուածն ես,
եւ ես երախտագիտութիւն եմ յայտնում Քեզ,
իմ Աստուածն ես, եւ ես մեծարում եմ Քեզ:

²⁹ Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը. նա բարի է,
Նրա սէրը յաւիտենական է:

[այս սաղմոսով ասարտում է Հայէլը. Մղմ 113-118]



ԱՂՄՈՍ 119 [118]

Ես սիրում եմ Քո օրէնքը

Կցորդ. Ով սիրում է իր մերձաօրին, լիովին կարարել է օրէնքը (Հում 13, 8):

կամ. Չեղնոր պարտօնաւոր եմ պալիս .

սիրեցե՛վ միմեանց ինչպէ՛ս ես յեղ սիրեցի (Հմմտ. Յվհ 13, 34):

կամ. Չեմ եկել օրէնքը ջնջելու, այլ՝ լրացնելու (Հմմտ. Մտթ 5, 17):

կամ. Բոլոր պարտօնաւորները թողանալուս ժե՛ն այս մեկում .

«Պիտի սիրեմ մերձաօրինս ինչպէ՛ս անձն մասն» (Հմմտ. Հում 13, 9; Ղւտ 19, 18):

կամ. Սերը ոչ մէկ շարի՛վ չի հասցնում մերձաօրին . օրէնքը լիութիւնն է սերն է (Հում 13, 10):

կամ. Օրէնքը մեզ համար մի մանկավարժ եղաւ ,

որ առաջնորդեց մեզ դէպքի՝ Բրիսպոս (Հմմտ. Գղտ 3, 24):

կամ. Ահա այսպէ՛ս եմ իմանում՝ թէ ճանաչում եմ Աստուծո՛ւն .

թե՛ւ պահում եմ Իր պարտօնաւորները (Հմմտ. 1Յվհ 2, 3):



Ա – Ալէֆ

Ամբիժ ճանապարհը

Կցորդ. Երանի՛ նրանց՝ ովքեր լսում են Գործարարում են Աստուծոյ խօսքը (Ղկս 11, 28):

կամ. Ով իր հայեացքը սեւեռում է կարարեալ օրէնքին ,

երանելի կը լինի նրա Գործարարմամբ (Հմմտ. Յկբ 1, 25):

կամ. Ընթացե՛վ, վանի դեռ լոյս ունե՛վ .

«Ով ընթանում է խաւարի մէջ , չգիտէ՛ թէ ո՛ր է գնում (Հմմտ. Յվհ 12, 35):

¹ Երանելի են նրանք՝ որոնց ճանապարհն ամբիժ է
եւ ընթանում են Տիրոջ օրէնքի մէջ .

² Երանելի են նրանք՝ ովքեր հետեւում են Նրա խրատներին,
իրենց ամբողջ սրտով փնտռում են Նրան:

³ Անարգարութիւններ երբեք չեն գործում,
ընթանում են Նրա ճանապարհներով .

⁴ Դու չես հռչակեցիր Քո պատուիրանները,
որոնք ամբողջովին հարկ է գործադրել:

⁵ Կամքիդ գործադրման մէջ
թող հաստատակամ լինեն իմ ճանապարհները,

⁶ յայնժամ ամօթից չեմ կարժրի
հայեացքս հրամաններիդ սեւեռելիս:

⁷ Սրտի մաքրութեամբ շնորհակալութիւն եմ յայտնում Քեզ,
արդար վճիռներովդ կրթուած,

⁸ կամենում եմ պահպանել կամքդ,
իսկ Դու մի՛ լքիր ինձ:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Բ – Բէթ

Պատուիրաններիդ շուրջ եմ ուզում մտածել

Կցորդ. Եթե խօսէրս մնան յեր մեջ,
խնդրեցե՛ք այն՝ ինչ ուղտ-մէ՛ք, եւ կը արօ՛ն յեզ (Հմմտ. Յվհ 15, 7):

Կամ. Աստուծոյ խօսէ՛ր բնակ-ո՛ւմէ յեր մէջ, երիտասարդներ .
դո՛ւ յաղթելէ՛ք շարին (Հմմտ. 1 Յվհ 2, 14):

Կամ. Այո՛ խօսէ՛ր յեզ ասացի, որպէսզի ուրախութիւնս յեր մէջ լինի (Հմմտ. Յվհ 15, 11):

Կամ. Դո՛ւ չարդէն իսկ սորբ է՛ք, խօսէ՛ն շնորհի՛ւ՝ որ ասեցարանեցի յեզ (Յվհ 15, 3):

⁹ Երիտասարդն ինչպէ՞ս մաքուր կը պահի իր ընթացքը.
Քո խօսքին հետեւելով:

¹⁰ Քեզ փնտռում եմ իմ ամբողջ սրտով,
պատուիրաններիցդ մի՛ թող՝ որ չեղուեմ:

¹¹ Սրտումս պահպանում եմ խոստումդ,
որպէսզի Քո ղէմ չմեղանչեմ.

¹² օրհնեալ ես Դու, Տէր,
ուսուցիր ինձ Քո կամքը:

¹³ Շրթունքներիս պատմել եմ տալիս
բերանիդ բոլոր վճիռները,

¹⁴ խրատներիդ ճանապարհում ուրախանում եմ,
աւելի՛ քան բոլոր հարստութիւններով պատուած:

¹⁵ Պատուիրաններիդ շուրջ եմ ուզում մտածել,
ճանապարհներիդ մտովին հայել,

¹⁶ վայելքս կամքիդ մէջ եմ գտնում,
չեմ մոռանում Քո խօսքը:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Գ – Գիմել

Պանդուխտ եմ երկրի վրայ

Կցորդ. Հասարակ մէջ մահացան մեր հայրերը,
դաւանելով՝ թե օրար էին ու պանդոխտ (Հմմտ. Եբբ 11, 13):

կամ. Աւերարանին արժանի շաղափացիներն նման վարո՞ւեցե՞լ,
առանց ընդհանրապէս՝ որ Հակառակորդները սարսափեցնեն յետ (Հմմտ. Փլպ 1, 27-28):

¹⁷ Բարի եղիր ծառայիդ հանդէպ եւ կ'ապրեմ,
կը պահեմ Քո խօսքը.

¹⁸ աչքերիս առջեւից հեռացրու քօղը, կը տեսնեմ
եւ կը հայեմ օրէնքիդ հրաշալիքները:

¹⁹ Պանդուխտ եմ ես երկրի վրայ,
հրամաններդ ինձնից մի՛ թաքցրու,

²⁰ անձս ամէն վայրկեան մաշուում է
վճիռներիդ փափաքով:

²¹ Դու սպառնում ես հպարտներին ու անիծեալներին,
որոնք խուսափում են Քո հրամաններից,

²² Հեռացրու ինձնից նախատինքն ու արհամարհանքը,
եւ հետեւում եմ Քո խրատներին:

²³ Նոյնիսկ եթէ հզօրները նստում ու զրպարտում են ինձ,
ծառաղ խորհրդածում է կամքիդ մասին,

²⁴ խրատներդ են իմ վայելքը,
եւ նրանցից եմ ներշնչւում:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Դ – Դալէթ

Ենթարկում եմ Քո վճիռներին

Կցորդ. Աւերցրե՛լ իմ Լո՞ւծը յեր վրայ

եւ Հանգիստը կը գտնե՛լ յեր անցերի Համար (Հմմտ. Մտթ 11, 29):

կամ. Ո վ Լո՞ւմէ իմ խօսքը, անցելէ մահից պէտք է կեանք (Հմմտ. Յվհ 5, 24):

կամ. Եթէ մէկը պահի իմ խօսքը, մահ չի տեսնի յաւիտեան (Յվհ 8, 51):

կամ. Ո վ պահու՞մէ Իր պարօ՞րանները, Բնակու՞մէ Լո՞ւսի մէջ,
իսկ Լո՞ւսի մէջ (Հմմտ. 1Յվհ 3, 24):

²⁵ Անձս հողին է մօտենում,
ապրեցրու ինձ խօսքիդ համաձայն,

²⁶ պատմում եմ Քեզ իմ ճանապարհները. Դու պատասխանում ես ինձ,
Քո կամքը սովորեցրու ինձ:

²⁷ Պատուիրաններիդ ճանապարհում իմաստուն դարձրու ինձ,
կը խորհրդածեմ հրաշագործութիւններիդ շուրջ,

²⁸ տրտմութիւնից գետնին է հաւասարուել կեանքս,
ոտքի կանգնեցրու ինձ խօսքիդ համաձայն:

²⁹ Հեռացրու ինձնից կեղծիքի ճանապարհը,
օրէնքիդ մէջ՝ շնորհ արա ինձ.

³⁰ հաւատարմութեան ընթացքն ընտրեցի,
ենթարկւում եմ Քո վճիռներին:

³¹ Յարուամ եմ Քո խրատներին, Տէր,
ամօթով չթողնես ինձ.

³² Հրամաններիդ ճանապարհով եմ ես ընթանում,
Դու ընդարձակում ես իմ սիրտը:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Ե – ՀԷ

Առաջնորդի ինձ հրամաններիդ ճանապարհով

Կցորդ. Մի՛ ճամակերպուել ներկայ աշխարհին,
այլ նորոգուեցե՛վ՝ ըմբռնելու՝ Աստուծոյ կամէլը (Հմմտ. Հում 12, 2):

Կամ. Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը.
ոչ ո՛վ չի գտնու չորը, եթէ ոչ՝ իմ մեջոցով (Յվհ 14, 6):

Կամ. Բողոքն էլ Աստուծոց կրթութեան լինելու.
ով սովորում է չորից, գտնու է իմ մօտ (Հմմտ. Յվհ 6, 45):

³³ Սովորեցրու ինձ, Տէր, կամքիդ ճանապարհը,
ամենայն ուշադրութեամբ կը հետեւեմ նրան.

³⁴ Հասկացրու ինձ ինչպէս պահպանել օրէնքդ,
իմ ամբողջ սրտով կը դործադրեմ այն:

³⁵ Առաջնորդիր ինձ հրամաններիդ ճանապարհով,
սա՛ է իմ փափաքը.

³⁶ սիրտս դէպի խրատներդ կողմնորոշիր,
եւ ո՛չ թէ դէպի դրամն ու շահը:

³⁷ Աչքերս կտրիր ունայնութեանը հայելուց,
ապրեցրու ինձ Քո ճանապարհներում.

³⁸ ծառայիդ համար իրականացրու
երկրպագուներիդ կատարած խոստումդ:

³⁹ Հեռացրու նախատինքը, որ սարսափեցնում է ինձ,
բարի են Քո վճիռները.

⁴⁰ ահա, ես փափաքում եմ Քո պատուիրանները,
արդարութեանդ մէջ ինձ ապրեցրու:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Չ – ՎԱՍ

Ես սիրում եմ Քո հրամանները

Կցորդ. Ես չեմ ամաչում Եւեբարանի ճամար, որովհետեւ Աստուծոյ զօրութիւնն է (Հում 1, 16):

Կամ. Ով սիրում է իր մերձաորին, լինելն կարարել է օրէնքը (Հում 13, 8):

Կամ. Չեղնոր պարտութեան եմ գտնու.
սիրեցե՛վ մեմեանց ինչպէս ես յեղսիրեցի (Հմմտ. Յվհ 13, 34):

⁴¹ Թող վրաս իջնի Քո սէրը, Տէր,
փրկութիւնդ՝ խոստմանդ համաձայն.

⁴² պատասխան կ'ունենամ ինձ նախատողների համար,
քանի որ հաւատք ունեմ խօսքիդ նկատմամբ:

⁴³ Ճշմարտութեան խօսքից մի՛ զրկիր բերանս,
քանի որ յոյսս Քո դատաստանն է:

⁴⁴ առանց դադարի գործադրելու եմ օրէնքդ,
յարատեւութեամբ, ընդմիջտ, անվախճան:

⁴⁵ Ընթանալու եմ ամենայն ազատութեամբ,
քանի որ քննում եմ Քո պատուիրանները:

⁴⁶ Թագաւորների առաջ խօսելու եմ խրատներիդ մասին,
առանց ամաչելու երբեք:

⁴⁷ Ուրախութիւնս հրամաններիդ մէջ եմ գտնում,
այո՛, յոյժ սիրում եմ դրանք:

⁴⁸ ձեռքերս պարզում եմ դէպի հրամաններիդ, որ սիրում եմ,
եւ կամքիդ շուրջ եմ խորհրդածում:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Է – Ձախն

Յիշում եմ Քո Անունը

*Կցորդ. Աստուածաշնչում պարունակուած մխիթարութեան պօրութեամբ ,
մենք վառ ենք պահուած յոյսը (Հմմտ. Հոմ 15, 4):*

*Կամ. Իմ մասին գրուած է գրէտեմ,
որ պէտք է կատարեմ, Աստուած, Քո կամէրը (Հմմտ. եբր 10, 7):*

*Կամ. Տէրը չի ուշացնում կատարելու խոստումը,
բայց համբերութիւն է գործածում յեր նկատմամբ (Հմմտ. 2 Պտ 3, 9):*

⁴⁹ Յիշիր ծառայիդ տրուած խօսքը,
այդ խօսքն եմ դարձրել իմ յոյսը:

⁵⁰ ահա՛ փորձութեան մէջ մխիթարութիւնս,
խոստումդ վերակենդանացնում է ինձ:

⁵¹ Հպարտներն անչափ ծաղրում են ինձ,
բայց չեմ հեռանում Քո օրէնքից:

⁵² յիշում եմ յաւիտենական վճիռներդ, Տէր,
ահա սա՛ է իմ մխիթարութիւնը:

⁵³ Ձայրոյթս բորբոքւում է ամբարիշտների դէմ,
որոնք լքում են օրէնքդ:

⁵⁴ կամքդ ինձ համար ուրախ շարական է
պանդխտութեանս երկրում:

⁵⁵ Գիշերով յիշում եմ Քո Անունը,
պահում եմ Քո օրէնքը:

⁵⁶ ահա, Տէր, այն՝ ինչ վերաբերւում է ինձ.
պահել Քո պատուիրանները:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Կցորդը. Անցեալ կէանէն մոռացած ,
 չգորոմ եմ հասնել ասորո՛ւածային կոչմանն անպարակակէտին (Հմմտ. Փլպ 3, 13-14):

Կամ. Գո՛ւն է իմ ընկերներն է՛ն ,
 եթէ գործարարո՛ւմ եմ այն՝ ինչ հրամայո՛ւմ եմ յետ (Յվհ 15, 14):

⁵⁷ Հռչակում եմ իմ բաժինը, Տէր.
 պահել Քո խօսքը.

⁵⁸ ամբողջ սրտովս փափաքում եմ Քո դէմքը,
 խոստմանդ համաձայն՝ ողորմիր ինձ:

⁵⁹ Անցեալ ընթացքիս շուրջ կրկին մտորեցի,
 վերադառնում եմ Քո խրատներին.

⁶⁰ շտապում եմ եւ չեմ ուզում ուշանալ՝
 գործադրելու Քո հրամանները:

⁶¹ Ամբարիչտների խաբկանքները որսացել էին ինձ,
 բայց չեմ մոռանում Քո օրէնքը.

⁶² ուչ գիշերով արթնանում եմ՝ շնորհակալութիւն յայտնելու
 Քո արդար վճիռների համար:

⁶³ Մտերմութիւն եմ հաստատում նրանց հետ՝ ովքեր երկրպագում են Քեզ,
 պատուիրաններդ գործադրողները.

⁶⁴ սիրովդ լի է ամբողջ երկիրը, Տէր,
 Քո կամքը սովորեցրու ինձ:



Կցորդը. Խոնարհեցրէ՛ն յետ անյետրը Ասորոյ յետնէն պակ ,
 որպէսզի յետը բարձրացնի յարմար ժամանակին (Հմմտ. 1 Պտ 5, 6):

Կամ. Ալ երաժնո՛ւել է՛ն մի անհաճ սերմից .
 Ասորոյ կենդանի ե՛լ յա՛նդ ենական խօսէ՛ր (Հմմտ. 1 Պտ 1, 23):

⁶⁵ Ծառայիդ համար Դու բարիք ես գործում, Տէր,
 Քո խօսքի համաձայն.

⁶⁶ Բարութեան համը եւ կշռադատութիւն սովորեցրու ինձ,
 որովհետեւ հետեւում եմ Քո հրամաններին:

⁶⁷ Նախքան խոնարհեցուելս՝ մոլորում էի,
 բայց այժմ պահում եմ Քո խոստումը.

⁶⁸ այո՛, Դու բարի ես եւ գործում ես բարին,
 սովորեցրու ինձ Քո կամքը:

⁶⁹ Հպարտները ստույգեամբ են պատում ինձ,
 ամբողջ սրտով հետեւում եմ Քո պատուիրաններին.

⁷⁰ ճարպի նման խցուեց է նրանց սիրտը,
Քո օրէնքի մէջ եմ ես ուրախանում:

⁷¹ Խոնարհեցուելն ինձ համար օգտակար է,
սովորեցի Քո կամքը:

⁷² Իմ բարիքը Քո բերանի օրէնքն է,
աւելի՛ քան ոսկու եւ դրամի միլիոնները:

ՅՈՐՅՈՐՅՈՐՅ

Ժ – Եօդ

Հեղիբ վրաս ողորմութիւնդ

Կցորդ. Հասկեր լո՞ւ վրայ եւ սովորեցրածիդ վրայ.
Կը մերկեան ինձիդ լեզու եւ նրանց՝ ուղիներ լսում եմ լեզ (Հմմտ. 1Տմ 4, 16):
կամ. Եշտապիբ Ես քոյ առաջ ներկայանալ
որպէս ճշմարտութեան խօսիչ Կապարիմ քնքէս (Հմմտ. 2Տմ 2, 15):

⁷³ Ձեռքերդ ստեղծեցին եւ պահպանում են ինձ,
կշռադատութիւն տուր ինձ. կ'ըմբռնեմ հրամաններդ:

⁷⁴ Երկրպագուներդ թող տեսնեն ինձ եւ ուրախանան,
ես խօսքիդ վրայ եմ դրել իմ յոյսը:

⁷⁵ Գիտեմ, Տէր, վճիռներդ արդար են,
երբ խոնարհեցնում ես ինձ, հաւատարիմ ես:

⁷⁶ սէրդ թող լինի իմ մխիթարութիւնը,
ծառայիդ տրուած խոստման համաձայն:

⁷⁷ Հեղիբ վրաս ողորմութիւնդ եւ կ'ապրեմ,
ուրախութիւնս Քո օրէնքն է:

⁷⁸ Թող ամօթից կարմրեն հպարտները, որ զրպարտում են ինձ,
մինչ ես խորհրդածում եմ պատուիրաններիդ շուրջ:

⁷⁹ Թող վերադառնան իմ մօտ նրանք՝ ովքեր պաշտում են Քեզ,
Քո խրատները սիրողները:

⁸⁰ կամքիդ մէջ անբաժան թող լինի սիրտս,
որպէսզի ամօթով չմնամ:

ՅՈՐՅՈՐՅՈՐՅ

ԺԱ – ԿաՖ

Չեմ լքում Քո պատուիրաններդ

Կցորդ. Եւս սա է խոստումը, որ Ես քո-աշ քո-ելէ մեզ.
յա-ի քեանահան կեանքը (Հմմտ. 1Յվզ 2, 25):
կամ. Մե՞նչ յա-ի քեանահան կեանքի յոյսն ունենի,
որ խոստացելէ մեզ Ես քո-աշ՝ որ չի սքո-մ (Հմմտ. Տտտ 1, 2):
կամ. Հաստատուն պահեմք մեր յոյսի պատանութիւնը,
որ ուղիներ Կապարիմ է՝ Մա՛ ուղի խոստացելէ (Հմմտ. Եբբ 10, 23):
կամ. Ես նրանց քո-եցի Քո խօսիչ եւ աշխարհը նրանց արեց (Յվզ 17, 14):

⁸¹ Հալւում ու մաշում եմ փրկութեանդ սպասման մէջ,
յոյս խօսքիդ վրայ է.

⁸² աչքերս տկարանում են խոստմանդ սպասելով
եւ ասում եմ. «Ե՞րբ ես ինձ մխիթարելու»:

⁸³ Նման եմ ծխի առջեւ դրուած տիկի,
բայց չեմ մոռանում Քո կամքը.

⁸⁴ Ի՞նչ է հաշիւը ծառայիդ օրերի,
ե՞րբ ես դատելու ինձ հալածողներին:

⁸⁵ Գոռոզներն ինձ համար փոս են փորում,
արհամարհելով Քո օրէնքը.

⁸⁶ Քո հրամաններն ամբողջովին հաւատարմութիւն են,
յանիրաւի են ինձ հալածում. օգնի՛ր ինձ:

⁸⁷ Քիչ է մնում՝ որ գետին գցեն ինձ,
չեմ լքում Քո պատուիրանները.

⁸⁸ սիրոյդ համաձայն՝ ապրեցրու ինձ,
բերանիդ խրատները կը պահեմ:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

ԺԲ – Լաւեդ

Քո խօսքը յաիտեմալան է

Կցորդ. Տիրոջ խօսքը մեռած է յաւելք. սա է Աւետարանի խօսքը (1 Պտ 1, 25):

կամ. Որդին Գոյութիւն ունեցող ամեն բան կրոն է Իր խօսքի զօրութեամբ (Հմմտ. եբր 1, 3):

կամ. Երկնէն ու երկիրը կ'անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնի երբեք (Ղկս 21, 33):

⁸⁹ Քո խօսքը, Տէր, յաւիտենական է,
հաստատուն է երկնքի նման.

⁹⁰ սերնդէ սերունդ է տեւում հաւատարմութիւնդ,
ստեղծեցիր երկիրը. հաստատուն կայ:

⁹¹ Քո բոլոր ծառաները հաստատուն են մնում
մինչեւ այսօր վճիռներիդ մէջ.

⁹² Եթէ օրէնքդ չլինէր ուրախութիւնս,
կ'ընկղմուէի թշուառութեանս մէջ:

⁹³ Երբեք չեմ մոռանայ վճիռներդ,
նրանցով ես ինձ ապրեցնում.

⁹⁴ Քեզ եմ պատկանում, փրկիր ինձ,
Քո վճիռներն եմ ես փնտռում:

⁹⁵ Զարագործներն յուսով են՝ թէ կը կործանեն ինձ,
բայց ես քննում եմ Քո խրատները.

⁹⁶ առանց չափի կատարելութիւն չեմ տեսել,
Քո հրամանն է անսահման:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Կցորդ. Ոչ միայն Հասցով է ապրում մարդ,

այլ Աստուծոյ Բերանից դուրս է կաթ ամեն մի խօսով (Մտթ 4, 4):

Կամ. Նրանում, ով պահում է Իր Խօսովը, Աստուծոյ սերը իսկապէս կարարեալ է (1Յվհ 2, 5):

Կամ. Եթէ պահել իմ պարտ-իրանները, կը մնա՞նք իմ սիրոյ մէջ (Յվհ 15, 10):

Կամ. Սա՛ է Աստուծոյ սերը. պահել Իր պարտ-իրանները (1Յվհ 5, 3):

⁹⁷ Որքան եմ սիրում Քո օրէնքը,
ամբողջ օրն այն է խորհրդածութեանս նիւթը.

⁹⁸ Թշնամիներիցս աւելի իմաստուն է դարձնում ինձ,
հրամանդ ընդմիշտ իմն է:

⁹⁹ Բոլոր ուսուցիչներիցս աւելի իմաստուն եմ,
որովհետեւ խորհրդածում եմ խրատներիդ մասին.

¹⁰⁰ տարեցներից աւելի կշռադատութիւն ունեմ,
որովհետեւ պահում եմ Քո պատուիրանները:

¹⁰¹ Չարի ճանապարհներից հեռացնում եմ ոտքերս,
պահելու համար Քո խօսքը.

¹⁰² Հեմ խոսափում Քո վճիռներից,
որովհետեւ Դու ես ինձ ուսուցանում:

¹⁰³ Քիմքիս քանի՛ցս քաղցր են խոստումներդ,
աւելի՛ քան մեղրը բերանիս մէջ.

¹⁰⁴ պատուիրաններդ կշռադատութիւն են տալիս ինձ,
այս իսկ պատճառով՝ ատում եմ կեղծիքի բոլոր ճանապարհները:

ՅՈՒՅՈՒՅՈՒՅՈՒՅ

Կցորդ. Ես եմ աշխարհի լոյսը.

«Վճեպե-ում է ինչ, խաւարում չի խառխափում» (Յվհ 8, 12):

Կամ. Ոչ ապրում-ընէն դարձրել մարդարէնների խօսելն,

որպէս մի ջահ՝ որ փայլում է խաւար վայրում (Հմմտ. 2 Պտ 1, 19):

¹⁰⁵ Խօսքդ ջահ է իմ քայլերին,
լուսաւորում է ճանապարհս.

¹⁰⁶ երդուեցի եւ այժմ կրկին հաստատում եմ,
որ պահելու եմ Քո արդար վճիռները:

¹⁰⁷ Ծայր աստիճան խոնարհեցուած եմ, Տէր,
խօսքիդ համաձայն՝ ապրեցրու ինձ.

¹⁰⁸ հաճութեամբ ընդունիր, Տէր, բերանիս ընծաները,
սովորեցրու ինձ Քո վճիռները:

¹⁰⁹ Ամէն վայրկեան վտանգուած է կեանքս,
բայց չեմ մոռանում Քո օրէնքը.

¹¹⁰ Հարազործներն ինձ համար որոգայթ են լարել,
Քո պատուիրաններից ես չեմ հեռանում:

¹¹¹ Խրատներդ իմն են ընդմիջտ,
ուրախութիւնն են իմ սրտի:

¹¹² սիրտս հնազանդեցնում եմ՝ կատարելու Քո օրէնքը
ուշադրութեամբ եւ յաւէտ:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

ԺԵ – Աամէք

Ատում եմ բաժանուած սրտերը

Կցորդ. Եղէ՛վ անձինձ, որ Գործի էն վերաժում խօսվը,
է՛ն ո՛չ թէ միայն ունկնդրներ, խաթելով ինձնէրդ յեղ (Հմմտ. Յկբ 1, 22):

Կամ. Ո վլա՞ն է Գործադրում է իմ խօսվերը,
նման է այն մարդուն, որն իր գոնը կառուցել է ժայռի վրայ (Հմմտ. Մտթ 7, 24):

Կամ. Ո վլա՞ն է խօսվը է՛ն պահում է թարի սրտով,
պղծաբերում է իր յարաբերութեամբ (Հմմտ. Ղկս 8, 15):

¹¹³ Ես ատում եմ բաժանուած սրտերը
եւ սիրում եմ Քո օրէնքը:

¹¹⁴ Իմ ապաստանն ու իմ վահանը Դու ես,
յոյսս խօսքիդ վրայ եմ դրել:

¹¹⁵ Հեռացէ՛ք ինձնից, չարիք գործողներ,
պահում եմ իմ Աստծոյ հրամանները:

¹¹⁶ օգնիր ինձ խոստմանդ համաձայն եւ կ'ապրեմ,
յուսախաբ չթողնես իմ սպասումը:

¹¹⁷ Պաշտպանիր ինձ եւ ես կը փրկուեմ,
խորհում եմ միջտ Քո կամքը:

¹¹⁸ Դու մերժում ես նրան՝ ով հեռանում է Քո կամքից,
այդպիսի մարդու խորամանկութիւնը ստութիւն է:

¹¹⁹ Թափուելիք աւելցուկ ես համարում երկրի ամբարիշտներին,
այս իսկ պատճառով՝ սիրում եմ Քո խրատները:

¹²⁰ Քո երկրիդով սարսափում է մարմինս
եւ պաշտում է Քո վճիռները:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

ԺԶ – Աիս

Ես Քո ծառան եմ

Կցորդ. Մանուկեցի՛ն այն շահային, որ սպասում է իր փրօջը,
որպէսզի Բաղն թէ Գայ ու Քախի, Քացի նրա առաջ (Հմմտ. Ղկս 12, 36):

Կամ. Չեղայլէ՛ս շահաներ շեմ անուանում, այլ՝ ընկերներ,
որովհետեւ յայտնեցի յեղայն՝ ինչ լաւ է եմ շօրից (Հմմտ. Յվհ 15, 15):

121 Իրաւունք եւ արդարութիւն գործադրեցի,
անձս մի՛ մատնիր մեղադրողներիս ձեռքը.

122 Բարիք ապահովիր ծառայիդ համար,
բռնաւորներն այլեւս երբեք չեն հարուածի ինձ:

123 Աչքերս տկարանում են փրկութեանդ
եւ արդարութեանդ խոստմանը սպասելով.

124 ծառայիդ նկատմամբ սիրոյդ համաձայն վարուիր,
սովորեցրու ինձ Քո կամքը:

125 Ես Քո ծառան եմ. կշռադատութիւն տուր ինձ
եւ կը հասկանամ Քո խրատները.

126 Ժամանակն է Տիրոջ համար գործելու,
խափանում են Քո օրէնքը:

127 Ահա, ես սիրում եմ Քո հրամանները,
ոսկուց, մաքուր ոսկուց աւելի.

128 ընթանում եմ պատուիրաններիդ ճանապարհով,
ատում եմ ստութեան ճանապարհները:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

ԺԷ – ՓԷ

Քո հրամանների ծարան ունեմ

Կցորդ. Ի՞մ կերակուրն այն է, որ կարարեմ կամէլը Նրա՝ ով առաջէլէ ինձ (Յղհ 4, 34):

կամ. Գոհունքին եմ մագրոցում Քեզ, Հայր, Տեր երկնէն ու երկրի,

որովհետեւ այս բաները յայտնեցիր մանուկներին (Հմմտ. Մտթ 11, 25):

129 Խրատներդ հրաշալի են,
սրա համար եմ դրանք պահում.

130 խօսքերիդ յայտնութիւնը լուսաւորում է,
պարզ սիրտ ունեցողներին իմաստութիւն է տալիս:

131 Հեւալով բացում եմ բերանս,
ծարաւի եմ Քո հրամաններին.

132 դէպի ինձ դարձիր եւ ցոյց տուր սէրդ,
ինչպէս վարում ես Անունդ սիրողների հետ:

133 Քայլերս խոստմանդ մէջ կողմնորոշիր,
թող ոչ մէկ չարիք չգերակշռի իմ դէմ.

134 ազատիր ինձ մարդու հարստահարութիւնից,
հետեւելու եմ Քո պատուիրաններին:

135 Թող դէմքդ լուսաւորի ծառայիդ,
սովորեցրու ինձ Քո կամքը.

136 աչքերս արտասուքի հեղեղ են թափում,
որովհետեւ չի պահպանում Քո օրէնքը:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Կցորդ. Աշակերտները յիշեցին, որ Գրո-աթ է.

«Տանդ Ըսմար զԲացաթս նախանշախնդրո-թի-նը մաշո-մ է ինչ» (Հմմտ. Յվհ 2, 17):

Կամ. Այո՛, Տէր, ամենակալ Աստուծո՛ւ,

ճշմարտից եւ արդար էն Քո վճիռները (Յյտ 16, 7):

¹³⁷ Դու արդար ես, Տէր,
ուղղամիտ են Քո վճիռները.

¹³⁸ Դու յայտնում ես Քո արդար խրատները,
որոնցում է բովանդակուած ճշմարտութեան լիութիւնը:

¹³⁹ Մի վառ եռանդ մաշում է ինձ,
թշնամիներս մոռանում են Քո խօսքը.

¹⁴⁰ Կատարեալ է Քո խոստումը,
ծառադ յոյժ սիրում է այն:

¹⁴¹ Փոքր եմ ես եւ արհամարհանքի առարկայ,
չեմ մոռանում Քո պատուիրանները.

¹⁴² Քո արդարութիւնը յաւիտենական արդարութիւն է,
Քո օրէնքը՝ ճշմարտութիւն:

¹⁴³ Սրտնեղութիւնն ու մտատանջութիւնը տիրեցին ինձ,
Քո հրամաններում է իմ ուրախութիւնը.

¹⁴⁴ Քո խրատները յաւիտեան արդարութիւն են,
կշռադատութիւն տուր ինձ եւ կ'ապրեմ:



Կցորդ. Հակեցե՛լ եւ աղօթեցե՛լ, որպէսզի փորձո-թեան շմարնո-ւե՛լ.
Ընդիմ յօժար է, Բայց մարմինը՝ փկար (Մրկ 14, 38):

Կամ. Ամեն վայրկեան Հակեցե՛լ եւ աղօթեցե՛լ,

որպէսզի պարբար լինե՛լ ներկայանալու մարդո- Որդո- առաջ (Հմմտ. Ղկս 21, 36):

Կամ. Քեզ շար մօտ է խօսելը. Բերանից վրայ եւ արտից խորէ՛ր-մ (Հում 10, 8):

¹⁴⁵ Ամբողջ սրտովս կանչում եմ. պատասխանիր ինձ, Տէր,
կը կատարեմ Քո կամքը.

¹⁴⁶ Ղէպի Քեզ աղաղակում եմ. փրկիր ինձ,
կը պահեմ Քո խրատները:

¹⁴⁷ Արշալոյսը կանխում եմ եւ կանչում եմ Քեզ,
յոյսս Քո խօսքերի վրայ է.

¹⁴⁸ աչքերս կանխում են առաւօտեան լոյսին,
խոստմանդ շուրջ խորհրդածելու համար:

¹⁴⁹ Սիրոյդ համաձայն՝ ընդունիր իմ ձայնը, Տէր,
թող վերակենդանացնեն ինձ Քո վճիռները.

150 անարդ ու անպատիւ հալածիչներս մօտենում են,
հեռանում են Քո օրէնքից:

151 Դու մօտ ես, Տէր,
Քո հրամանները ճշմարտութիւն են.

152 վաղուց ճանաչում եմ Քո փափաքները,
հաստատուած են յաւիտենութեան համար:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

Ի – ՌԷ

Դու մարտնչիր իմ պատերազմում

Կցորդ. Ս րապէ՛վ Հոգո՛ւս ու՛րը, որ Աստուծոյ խօսիչն է (Եփս 6, 17):

Կամ. Ե՛ս րաւաստում եմ շղթաներ կրելու՝ չափ,
Բայց Աստուծոյ խօսիչը շղթայո՛ւս չէ (Հմմտ. 2Տմ 2, 9):

153 Տե՛ս իմ խեղճութիւնը եւ ազատիր ինձ,
չեմ մոռանում Քո օրէնքը.

154 Դու մարտնչիր իմ պատերազմում եւ փրկիր ինձ,
խոստմանդ համաձայն՝ կեանք տուր ինձ:

155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներից,
որովհետեւ Քո կամքը չեն փնտռում.

156 ողորմութիւններդ անվախճան են, Տէր,
վճիռներիդ համաձայն՝ ապրեցրու ինձ:

157 Բազմամբոխ հետապնդում են ինձ եւ նեղում,
բայց ես չեմ հեռանում Քո խրատներից.

158 տեսայ՝ ով դաւաճանում է եւ ինձ հակառակում,
նա չի ճանաչում Քո խոստումը:

159 Դու գիտես՝ որ ես սիրում եմ Քո պատուիրանները, Տէր,
սիրոյդ համաձայն՝ ապրեցրու ինձ.

160 խօսքիդ էութիւնը հաւատարմութիւնն է,
յաւիտեան է արդար վճիռներիցդ իւրաքանչիւրը:

ՅՈՐՅՈՐՅՈՐ

ԻՍ – ՍԻՆ

Մեծ խաղաղութիւն՝ օրէնք սիրողների համար

Կցորդ. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. Դու՛ս յաւիտենական կեանքի խօսիչն ո՛ւնես (Յվհ 6, 68):

Կամ. Դու՛ն էլ լոյս է՛վ Տէր ո՞ջ մէջ. ընթացէ՛վ որպէս լոյսի որդիներ (Եփս 5, 8):

161 Հզօրներն յանիրաւի հալածում են ինձ,
բայց իմ սիրտը երկնչում է Քո խօսքերից.

162 խոստմանդ մէջ եմ գտնում իմ ուրախութիւնը,
ինչպէս մէկը՝ որ մեծ գանձ է բացայայտում:

163 Ատուամ եմ կեղծիքը, խորշում եմ նրանից,
ես սիրում եմ Քո օրէնքը.

164 օրուայ մէջ եօթն անգամ գովաբանում եմ Քեզ,
Քո արդար վճիռների համար:

165 Մեծ խաղաղութիւն՝ օրէնքդ սիրողների համար,
նրանցում հակասութիւն չկայ.

166 սպասում եմ Քո փրկութիւնը, Տէր,
գործադրում եմ Քո հրամանները:

167 Թող խրատներդ պահպանեն կեանքս,
ես եռանդագին սիրում եմ նրանք.

168 Հետեւում եմ վճիռներիդ ու խրատներիդ,
Քո առջեւ են իմ բոլոր ճանապարհները:



ԻՔ – Թաու

Փնտռիր Քո ծառային

Կցորդ. Իմ ոչխարները Լուսնի իմ յայնը,

ես ճանաչում եմ նրանց եւ նրանի մեքէ-ու-մէն ինչ (Յվհ 10, 27):

Կամ. Եթէ մե մարդու հարե-ր ոչխար ունի եւ նրանցից մէկը կորու-մ է,

մե՞թէ չի Գնայ փնտրու-լու-այդ կորած ոչխարը (Հմմտ. Մտթ 18, 12):

Կամ. Մահն էի մոլորու-ած ոչխարներին,

Թայց այժմ վերադարձել է յեր կեանքերի հովու-ին (Հմմտ. 1 Պտ 2, 25):

Կամ. Սուրբ եւ արդար է օրէնքը, սուրբ եւ Թարի՝ պարու-նրանը (Հմմտ. Հոմ 7, 12):

169 Քո առաջ թող հասնի իմ աղաղակը, Տէր,
խօսքիդ համաձայն՝ տուր ինձ կշռադատել.

170 Քո առջեւ թող բարձրանայ իմ աղօթքը,
խոստմանդ համաձայն՝ ազատիր ինձ:

171 Շուրթերիցս թող փառաբանութիւնդ բխի,
որովհետեւ Քո կամքը յայտնում ես ինձ.

172 լեզուս թող խոստովադ պատմի,
Քո հրամաններն արդարութիւն են:

173 Ձեռքդ թող ինձ օգնութեան հասնի,
որովհետեւ Քո պատուիրաններն ընտրեցի.

174 Տէր, փրկութեան ծարաւն ունեմ,
Քո օրէնքն է իմ վայելքը:

175 Թող կարողանամ ապրել եւ տակաւին փառաբանել Քեզ,
թող պաշտպանեն ինձ Քո վճիռները.

176 ես կորում եմ մոլորուած ոչխարի նման,
փնտռիր ծառայիդ. չեմ մոռանում Քո հրամանները:



ՍԱՂՄՈՍ 120 [119]

Ես խաղաղութիւն եմ

- Կցորդ.** Երանի՜ խաղաղարարներին ,
որովհետեւ նրանք Աստուծոյ որդիներ են կոչուելո՛ւ (Մտթ 5, 9):
- Կամ.** Քրիստոս Յիսուս մեր խաղաղութիւնն է ,
Նա՛ որ երկուսին միայն մեկ պարձրեց (Հմմտ. Եփս 2, 14):
- Կամ.** Քրիստոս եկել է խաղաղութիւնն աւերարանելո՛ւ չե՛ղ՝ Ընդհանրութիւն
եւ նրանց՝ ովքեր մօտիկ էին (Հմմտ. Եփս 2, 17):
- Կամ.** Խաղաղութիւնն է մեռելոց չե՛ղ, իմ խաղաղութիւնն է մտալիս չե՛ղ,
այն չե՛ղ չէմ գալիս այնպէս՝ ինչպէս աշխարհն է այն գալիս (Հմմտ. ՅղՏ 14, 27):
- Կամ.** Քանի որ ես թնակուեմ ենթ մարմնում, ախորի մեջ եմ, Տիրոջից Ընդհանրութիւն (2Կր 5, 6):

¹ **Աստիճանների երգ:**

Նեղութեանս մէջ աղաղակեցի Տիրոջը
եւ Նա ինձ պատասխանեց.
² ազատիւ ինձ, Տէր, ստութեան շուրթերից
եւ խաբող լեզուից:

³ Ինչպէ՞ս հարուածել քեզ եւ ինչպէ՞ս փոխհատուցել քեզ,
ո՛վ նենգաւոր լեզու,
⁴ ո՛վ բռնաւորի սրածայր նիզակ,
ո՛վ դու գիհհենու հրաշէկ ածուխ:

⁵ Խեղճ անձ իմ, որ ապրում եմ աքսորում,
անապատի վրանների մէջ.

⁶ արդէն երկար ժամանակ եմ ապրում
նրա հետ՝ ով ատում է խաղաղութիւնը.

⁷ ես խաղաղութիւն եմ եւ այն աւետարանում եմ,
նրանք պատերազմ են ուզում:



ՍԱՂՄՈՍ 121 [120]

Տէրը քո պահապանն է

- Կցորդ.** Մասն էի՞ մոլորութիւնն ոչխարներին ,
այժմ վերադարձել է չե՛ր կեանքերի պահապանին (Հմմտ. 1Պտ 2, 25):
- Կամ.** Երանց չե՛ Ընդհանրութիւնն արեւը, ո՛չ էլ որեւէ արեւակի թարս ,
որովհետեւ Պատը լինելո՛ւ է նրանց Ընդհանրութիւնը (Հմմտ. Յյտ 7, 16-17):
- Կամ.** Այո՛, Տէրը Ընդհանրութիւնն է, կը Ընդհանրութիւնն է չե՛ղ եւ կը պահպանի շարից (2Թս 3, 3):
- Կամ.** Սուրբ Հայր , Քո Անուամբ պահպանիւն նրանց՝ որոնց Պատարիւնն է (ՅղՏ 17, 11):

¹ **Աստիճանների երգ:**

Աչքերս դէպի լեռներն եմ բարձրացնում,
որտեղի՞ց է ինձ օգնութիւն գալու.

² Ինձ օգնութիւն է գալու Տիրոջից,
նա է ստեղծել երկինքն ու երկիրը:

³ Ձի թողնի՝ որ սասանուի քո ոտքը,
քունն չի մտնում քո պահապանը.

⁴ ո՛չ, չի ննջում եւ քունն չի մտնում
Իսրայէլի պահապանը:

⁵ Տէրը քո պահապանն է, քո ստուերը,
Տէրը կանգնած է քո աջին.

⁶ ցերեկուայ ընթացքում չի հարուածի քեզ արեւը,
ո՛չ էլ լուսինը գիշերով:

⁷ Տէրը պահպանելու է քեզ ամէն չարիքից,
պահպանելու է քո կեանքը.

⁸ Տէրը պահպանելու է քո մուտքն ու ելքը,
այժմ եւ յաւիտեան:



ԱՊՂԱՌԱ 122 [121]

Երուսաղէմի խաղաղութիւնը

Կցորդ. Տեսայ սուրբ ձաղափը, նոր Երուսաղէմը,
որ իջնում էր երկնից, Լսութո՛ց (Յյտ 21, 2):

Կամ. Գո՛ւ՛ն է երջեցելէ՛ք Սիոն լեռանը, կենդանի Լսութո՛յ ձաղափն,
երկնային Երուսաղէմին (Եբբ 12, 22):

Կամ. Երուսաղէմ, եղէ՛ գո՛ւն ոյնպէս ըմբռնէ՛ր այսօր
խաղաղութեան ճանապարհը (Հմմտ. Ղկս 19, 42):

Կամ. Որ ե՛ւ գո՛ւն, որ մտնէ՛ք, նախ ասացէ՛ք. « Խաղաղութիւնն այս օրանք » (Ղկս 10, 5):

¹ **Աստիճանների երգ: Դաւթի:**

Որքա՛ն ուրախ եղայ ես, երբ ինձ ասացին.
« Գնանք այցելելու Տիրոջ տունը ».

² Եւ ահա մեր ոտքերը հասել են
քո դռներին, Երուսաղէմ:

³ Երուսաղէմը լաւ կառուցուած քաղաք է,
ներանում ամէն բան միութիւն է.

⁴ այնտեղ է, որ բարձրանում են բազմութիւնները,
բազմութիւնները Տիրոջ:

Այնտեղ է Իսրայէլը վկայում
Տիրոջ Անուան փառքը.

⁵ այնտեղ է գտնուում դատաստանի գահը,
գահը Դաւթի:

⁶ Աղօթեցէք Երրուսողէմի խաղաղութեան համար.
«Խաղաղութիւն թող լինի նրան՝ ով սիրում է քեզ,
⁷ խաղաղութիւն թող լինի պարիսպներիդ ներսում,
անդորր՝ քո տներում»:

⁸ Եղբայրներիս եւ ընկերներիս սիրոյ համար
ես ասելու եմ. «Խաղաղութիւն քեզ»:

⁹ Տիրոջ՝ մեր Աստծոյ բնակատեղի սիրոյ համար
ես փնտռելու եմ քո բարիքը:



ԱՂՂԱՌԱ 123 [122]

Ողորմիր մեզ, Տէր

Կցորդ. Տէր, Գառնի Որդի, ողորմիր մեզ (Մտթ 20, 30):

Կամ. Մասն եղէ՛լ շառային, որ սպասում է Գիրոջը,
որ պէս պի թացի նրա առաջ, Հասիւ- Բէ Հասանի ու Բասիի (Հմմտ. Ղկս 12, 36):

Կամ. Հայեացիներս սեւեռուն պահեն՛ Յիսուսի վրայ,
որ Հեղինակն է մեր Հասարակի (Հմմտ. Եբր 12, 2):

Կամ. Եւս Տիրոջ աղախինն եմ, թող խօսի՛ր Համաշայն լինի ինչ (Ղկս 1, 38):

Կամ. Վարդեցէ՛լ իբրեւ սպասարդիկ, որ պէս Եսարայ շառաներ (Հմմտ. 1 Պտ 3, 14):

¹ Աստիճանների երգ:

Աչքերս բարձրացնում եմ դէպի Քեզ,
որ բնակւում ես երկնքում.

² ահա նրանք, ինչպէս ծառաների աչքերը,
ուղղուած՝ տէրերի ձեռքին:

Այնպէս՝ ինչպէս աղախնու աչքերը
ուղղուած են տիրուհու ձեռքին,
այնպէս էլ մեր աչքերն ուղղուած են Տիրոջը՝ մեր Աստծուն,
մինչեւ ողորմի մեզ:

³ Ողորմիր մեզ, Տէր, ողորմիր մեզ,
արհամարհանքը յագեցրել է մեզ.

⁴ կուշտ ենք հպարտների ծաղրանքից
ու գոռոզների արհամարհանքից:



ԱՂՂԱՌԱ 124 [123]

Մեր օգնութիւնը Տիրոջ Անուան մէջ է

Կցորդ. Գառնի՛ վախեցիր, որովհետեւ Ես է՛ր Հեղ եմ (Հմմտ. Գրծ 18, 9-10):

Կամ. Եւս, ես չեմ Հեղ եմ ամէն օր, մինչեւ աշխարհի վախճանը (Մտթ 28, 20):

կամ. Մե՛ն՛վ կարող են՛վ վարահո-թեամբ ասել.
Տէրն իմ օգնականն է, շեմ վախենայ (Եբր 13, 6):

¹ **Աստիճանների երգ: Դաւթի:**

Եթէ Տէրը մեր կողքին չլինէր, –
թող ասի Իսրայէլը, –

² Եթէ Տէրը մեր կողքին չլինէր,
երբ յարձակուել էին մեր վրայ,

³ ողջ ողջ կլանած կը լինէին մեզ,
իրենց զայրոյթի ցասման մէջ:

⁴ Երբ ջրերը հասնում էին մեզ,
յորձանքը մեզ կը տապալէր.

⁵ մեր կեանքերը կ'ընկղմուէին
յորդառատ ջրերի մէջ.

⁶ օրհնեալ է Տէրը, որ չթողեց մեզ
որս լինել նրանց ատամներին:

⁷ Թռչունի նման՝ մենք խուսափեցինք որսորդի ցանցից,
ցանցը կտրուեց եւ մենք ազատուեցինք.

⁸ մեր օգնութիւնը Տիրոջ Անուան մէջ է,
նա է ստեղծել երկինքն ու երկիրը:



ԱՊՂԱՌԱ 125 [124]

Թող խաղաղութիւն լինի Իսրայէլի վրայ

Կցորդ. Թող խաղաղութիւնն է ողորմութիւնն լինի
Ասրժոյ ամբողջ Իսրայէլի վրայ (Հմմտ. Գղտ 6, 16):

կամ. Այ՛ս վե՛մն վրայ եմ կառոցելո՛ւ իմ եկեղեցին
եւ գոթի՛ն գոնե՛րը շէն կարողանալո՛ւ նրան յաղթահարել (Մտթ 16, 18):

¹ **Աստիճանների երգ:**

Ով հաւատում է Տիրոջը,
նման է Սիոն լեռանը.
ոչինչ չի կարող սասանել նրան,
հաստատուն է, անկործանելի:

² Լեռները չըջապատում են Երուսաղէմին,
Տէրն իր ժողովրդի չորս կողմն է,
այժմ եւ յաւիտեան:

³ Ամբարիշտի գաւազանը չի մնայ
արդարների ժառանգութեան վրայ,
որպէսզի արդարներն իրենց ձեռքերը չերկարեն
չարիք գործելու:

⁴ Բարի եղիւր, Տէր, բարիների
եւ սրտով մաքուրների հետ.

⁵ Բայց նրանք՝ ովքեր խաբում են եւ դաւաճանում,
Տէրը թող նրանց մերժի ամբարիշտների հետ:

Թող խաղաղութիւն լինի Իսրայէլի վրայ:

